



ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

ՉԼԵՆՆԱԿ  
ՉԼԵՆՆԱԿ 25

ՎԵՏԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ  
ՏՅԱԵԿԱՆ ԲԱՂ. 6

Ձեռագիր եւ չ'դարձուիր

Ազգիք կ'ընտրուի  
ու ին մասնաւոր  
պայմաններով.

# Փիիւնիկ

Կը ծախուի ՄԷԿ զուտ ողջի

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ


## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

14 ՄԱՐՏ 1903

ԹԻԻ 29

### ՄԻՆՁԵԻ ԵՐՐԵ



Պիտի տեւէ բաժանորդներուս այս անտարբերութիւնը, որ կը խանգարէ թերթիս կանոնաւոր հրատարակութիւնը: Արտասահմանէն, հասկըցանք, յոյս չը կայ. ձրիակերներու լէզէօն մը կայ հոն, մանաւանդ ի Պուլլիարիա և Ամերիկա: Գոնէ Գահիրէի և շրջակայքի մեր Պատ. բաժանորդները թող փութացընեն հասցընել իրենց պարտքը: Մինչև ե՞րբ այս անհոգութիւնը:

### ՈՐԲ ԼԵՈՐ

(Ձեթ-ՈՒՆ)

Գաղափարը մարմին առաւ: Ս. Վարդանանց տարեգարձին օրը ծնունդ առած, մէկ երկու շաբթուան մէջ աճեցաւ այն, Ձեթուների Ընկերութիւնը: Պատասպարել շեռնցի որբուկները, խնամել զանոնք ու գաստիարակել. օգնել

Ձեթուների, ամոքել անոր անվերջ ու մշտապէս թշուառութիւնը, աղքատութիւնը, տառապանքը. պատրաստել Ձեթուների տնտեսական, մտաւորական ու բարոյական յառաջդիմութեան ճամբան. մէկ խօսքով, ապահովագրել Ձեթուների կեանքն ու գոյութիւնը, ահա՛ Ընկերութեան նպատակը:

Այսօր ունինք մօտ 300 ընկերակիցներ, ամեն դասակարգէ. կօշկի ներկիչներէն սկսեալ, ամեն կարգի արհեստաւորներ ու վաճառականներ. նիւթի ու գաղափարի մարդեր, Տ. Յովսէփ եպիսկոպոսնիս ա՛յգամ:

Երանի՛ թէ ասանկ Միութիւն մը կազմուած ըլլար գաղթային վերջին հոսանքէն ի վեր, Արտասահմանի բոլոր հայաշատ կեդրոնները. պատկառելի գանձ մը ունեցած պիտի ըլլային այսօր մեր որբերը: Հոգ չէ՛ սակայն, շա՛ն է ուշ քան երբեք:

\*\*\*

Ս. Կէտք էր գումարել: Ընդհանուր ժողովը, գումարել օր առաջ.

X

այս եղաւ յայտնուած փափազը բո-  
լոր անդամակցողներուն կողմէն:  
Ու պիտի շուտով տեղի ունենայ  
այդ գումարումը:

Վաղը, Կիրակի, Մարտ  
13, ցերեկը ժամը 15ն մինչեւ  
չեւ 4, քաղաքիս Բիրաւիտ  
Թատրոնին մէջ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Բանասխօտութիւն ընկերութեան  
նպասակին վրայ:

2. Անուանում Ա.ժ. Յանձնա-  
խումբի մը, որ պաշտօն ունենայ  
խնայարեղութեամբ ընկ. կանոնագիրը:

Թո՛ղ այս Ա.զգը ծառայէ հրաւի-  
րագրի. արդէն վաղը, եկեղեցին ծա-  
նուցում պիտի ըլլայ, ո՛չ միայն ան-  
գամ գրուողներուն, մեր բոլոր հայ-  
րենակիցներուն համար ազատ է մուտ-  
քը. անոնք որ դեռ անգամ գրուած  
չ'են, կրնան գալ ԲԻՐԱՄԻՏ Թատրոնը,  
Կիրակի ցերեկը, ժամը 15ն մինչեւ 4,  
հօն, Ընդհ. Ժողովին մէջ ստորագրել  
իրենց անդամակցութիւնը: Հետեւա-  
բար, փափագելի է որ կիրակի ցե-  
րեկուան այս Հաւաքովի փառաւոր-  
ուի երկսեռ հոծ բազմութեան մը ներ-  
կայութեամբ:

ՈՐԲ ԼԵՌը մտածողներ, Զեթունի  
անկե՛ղծ բարկամներ, գունդ գունդ  
զիմեցէք Բիրաւիտ, անգամ գրուե-  
ցէք, ու շուտով պիտի սրբունին ար-  
ցունքները մեր լքուած սրբերուն,  
շուտով պիտի ամօքի թշուառութիւնը  
հայ լեռին, Որբ լեռին, որ աւա՛ղ,  
սևեր հագած է, որովհետև իր ման-  
կիկները մէկիկ մէկիկ կը մեռնին  
ծաղկախտէ ու իր որբուկները մերկ  
ու բոկիկ մնացին բուքին դէմ ու ձիւ-  
նին տակ...:

ՀՐԱՒԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Փանուղի քաղաքի վանահայրը Գեր.  
Հ. Բարթողովեան Վ. Սապատեան  
Ը ղրկած է խմբագրութեանս հրատարակ-  
ուելու համար:

Աս 13 Մարտ 1903

S.

Կը փութամ ծանուցանել Ձեզի  
թէ՛ Զեթունի համար կազմուած ըն-  
կերութեանս Ընդհ. Ժողովը տեղի պի-  
տի ունենայ ամսոյս 15ին, կիրակի  
ցերեկը, ժամը 15ն մինչև 4, քաղա-  
քիս ծովեզերեայ Բիրաւիտ Թատրո-  
նին մէջ:

ՍՐԱԿԱՐԳ

1. Բանասխօտութիւն, ընկերու-  
թեանս նպասակին վրայ:

2. Անուանում Ա.ժ. Յանձնա-  
խումբի մը, որ պաշտօն ունենայ  
խնայարեղութեամբ կանոնագիրը:

Ուստի, կը խնդրեմ որ հաճիք,  
իրբև անդամակից, որոշեալ ժամուն  
ներկայ գտնուել Ընդհ. Ժողովին:

Ընկերութեանս անդամակցող Պատ.  
ազգայիններէն զատ, կը հրաւիրեմ  
նաև Աղեքսանդրիոյ հայ հասարակու-  
թեան երկսեռ անդամները:

Մուտքը ազատ է ամենուն հա-  
մար:

Լիայոյս սպասելով որ պատուէք  
Ձեր ներկայութեամբ այս կիրակի օր-  
ուան անդրանիկ Ընդհանուր Ժողովը,  
և օրհնելով զՁեզ,

Մնամ աղօթարար

ԲԱՐԹՈՂՈՎԵԱՆ Վ. ԹԱԳԱՃԵԱՆ

Զեթունի

### ԿԻՐԱԿԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ

### ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Յառաջիկայ Կիրակի, Մարտ 15, իրիկուան ժամը 9ին, Բիրամիտի Թառոնին մէջ պիտի տրուի ներկայացում մը Հայկական նորակազմ խմբի մը ձեռամբ: Խմբին կազմակերպիչն է ծանօթ դերասան Պ. Շաւարշ որ արդէն փայլուն համբաւ մը շինած է իրեն Գահիրէի մէջ տուած կարգ մը ներկայացումներով: Պ. Շաւարշ անաթոն մը չէ, այլ ճշմարիտ արուեստագէտ մը որ երկար տարիներ մասնակցած է դերասանապետ Մ. Մնակեանի խմբին և երեցած է Կ. Պոլսոյ, Իզմիրի, Պուլկարիոյ բեմերուն վրայ, միշտ ծափերով ողջունուած: Աշխոյժ, եռանդուն, համակրելի երիտասարդ մըն է Պ. Շաւարշ, իր արուեստին սիրահար, անով գինովցած ու անով լեցուած, որ յուսահատիչ չի գիտեր և ամէն զոհողութիւն ընելու պատրաստ է լաւագոյն պայմաններու մէջ ներկայացնելու համար իր կազմակերպած թատերական խաղերը: Վերջերս Գահիրէի մէջ, ի նպաստ Արաքս նուագախմբին տրուած տրամը, «Անմեղ Դատապարտեալը», ճշմարիտ յաղթանակ մը եղած է իրեն համար ինչպէս կը վկայեն այդ առթիւ հրատարակուած *ֆոնք ռանսիւները*:

Պ. Շաւարշ Բիրամիտի մէջ պիտի ներկայացնէ ԳԱԹԱՌԻՆ ՀՈՎՈՒԱՐՏ, Մեծանուն Ալեքսանդր Տիւմայի այնքան յուզիչ ու այնքան հրահանգիչ տրամը:

Ընթերցողք այժմէն պիտի կրնան վստահ ըլլալ սոյն տրամին յաջող ներկայացման մասին երբ ըսենք որ ԳԱԹԱՌԻՆ ՀՈՎՈՒԱՐՏը գլուարին գերը անձնուիրարար յանձն առած է կատա-

րել Տիպին ՄԱՌԻ, տեղի տալով բարեկամներու և Պ. Շաւարշի ստիպման հանդէպ: Տիպին Մառիի վերերևումը բեմին վրայ անյուսալի անակնկալ մըն է որ անշուշտ ուրախութեամբ պիտի իմանան բոլոր թատերասէրները որոնք ցաւով իմացած էին Ազն. Տիպինոյ բեմէն ի սպառ հրաժարելու որոշումը: Տիպին Մառի ետ կ'առնէ իր որոշումը ամենափափուկ զգացումէ մը մղուած, այն է ձեռք կարկառել արուեստակցի մը որ գլուարին կացութեան մը մէջ իրեն կը դիմէ: Տիպին Մառի իր այս արարքովը ցոյց կուտայ որ փափուկ ու զգայուն սիրտ մը ունի, ինչ որ ճշմարիտ արուեստագէտ արթիւթէ պահանջուելիք առաջին յատկութիւնն է: Արդեօք պիտի գտնուի՞ն դեռ չարալեզու քննադատներ որ այսպիսի գեղեցիկ անձնուիրութիւն մըն ալ դատապարտելու չափ փարիսեցի ըլլան: Այդպիսիները կրնան վստահ ըլլալ մեր ամենախորին և արդարացի արհամարհանքին:

Պ. Շաւարշ բախտը ունեցած է նաև իր խմբին մէջ առնելու Պ. Շիշմանեանը որ նոյնպէս Մնակեան խմբի լաւագոյն դերասաններէն մին է եւ խիստ յաջողակէս կը կատարէ հակառակորդի դերերը: Ալեքսանդրիայի հայ հասարակութիւնը արդէն քանիցս առիթը ունեցած է գնահատելու Պ. Շիշմանեանը եւ անշուշտ ուրախութեամբ պիտի ողջունէ իր վերերևումը բեմին վրայ:

Թատրոնի ազդարարարին մէջ կը կարդանք որ Պ. Շաւարշի խումբը վստահ Ալեքսանդրիայի հայ գաղութի քաջալերանքին, շարք մը ներկայացումներ պիտի տայ հետզհետէ: Ձեռք գիտեր ուստի՞ Պ. Շաւարշի խումբը այդ վստահութիւնը կ'ունենայ Ալեքսանդրիայի հայոց քաջալերանքին մասին: Մօտաւոր անցեալի մը մէջ տեղի ունեցած թատերական ձեռնարկները, ու-

րոնք այնքան շուտ ամլութեան դատապարտուեցան, պէտք չէին այդ վրտահութիւնը ներշնչել մեր համակրելի գերասանին: Սակայն Պ. Շաւարշ կրնայ առարկել որ եթէ ձեռնարկները սպասուած քաջալերութիւնը չի գտան պատճառը տեղոյս հայերուն անտարբերութիւնը չէր գէպի հայկական թատրոնը, ո՛չ ալ անոնց թատերատեցութիւնը, այլ որովհետեւ Ալեքսանդրիացի հայը որ յաճախ առիթ կ'ունենայ Եւրոպացի մեծ արուեստագէտներ տեսնելու, կամաց կամաց և անզգալաբար նրբացուցած է իր ճաշակը և խտապահանջ ըլլալ սկսած է թատրոնի խնդիրներու մասին: Հետեալաբար, կրնայ առարկել Պ. Շաւարշ որ երբ ինք վրտահ ենք, կ'ըսէ, Ալեքսանդրիայի հայոց քաջալերանքին վրայ, այդ վտահութիւնը մանաւանդ իր մէջ կը ծնի այն վտահութենէն որուն իր կազմակերպած խմբին վրայ: Ահա՛ աւարկութիւն մը որ այնքան ինքնավստահ է որքան ապահովիչ:

Եթէ Պ. Շաւարշի նորակազմ խումբը յաջողի, ինչպէս կը յուսանք, իր կիրակի օրուան ներկայացումովը գոհ ընել ամէնէ գթուարահաճները մեր հայ թատերասէրներուն, այն ատեն մեզի կը մնայ միջոցներ խորհիլ տնական գոյութիւն մը ապահովելու այդ խմբին որ հետզհետէ կատարելագործուելով կրնայ օր մը հայ թատերաբեմին պատիւ բերել:

Թատրոնին պէտքն ու օգուտները գիտնալու համար բարեբախտաբար պէտք չունինք եռանգուն Ս. Օտապաչեանի մը հարց-պատասխաններուն, ո՛չ ալ Պալեանի մը իմաստասիրական վարկածներուն: Խնդիրը երկար ժամանակէ ի վեր վճռուած է: Մեզի կը մնայ միայն, ինչպէս քիչ մը վերը ակնարկեցինք, միջոցներ խորհիլ նիւթական ոյժ մը առաջ բերելու որպէս զի թատերախումբը կարենայ ապրիլ:

Ասոր համար քիչ մը բարի կամեցողութիւն բաւական պիտի ըլլայ կարծենք:

Առ այժմ սպասենք կիրակի օրուան ներկայացումն կամ մանաւանդ փութանք ներկայ գտնուիլ անոր գիտնալու համար թէ նորակազմ խումբը իրաւցնէ արժանի՞ է ապրելու:

Ե. Օ.

### ՁԱՅՆ ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍԷՆ

Նախկին Գումարը	Ղրշ. Ողջ
Մեծ. Տեարք	2145
Տիգրան Հազարեան (Ասուան)	50
Աւետիս Գըլըճեան	» 50
Գէորգ Աղքատեան	» 50
Նազար Յակոբեան	» 50
Կարապետ Բարսեղեան (Շալլալ)	50
Ղզ. Սաքայեան (Նակ-Համատի)	20
Գրիգոր Զրպուքճեան	» 20
Միհրան Օհաննէսեան (Էսնէ)	48, 30
2483, 30	

Ամբողջ գումարն՝ երկու հազար չորս հարիւր ութսուն երեք դահեկան և երեսուն փարայ ողջ եգիպտական գոյացաւ ի վերին Եգիպտոս, որ 25 անգլիական լիրաի փոխարինելով՝ ուղարկեցինք Թաւրիզու հայուհեաց բարեգործական Միացեալ ընկերութեան ի գործադրութիւն: Փոխադրութեան ծախքը 14 1/2 դահեկան վճարելէ յետոյ՝ քովս մնացած է 44 դահեկան և 10 փարայ ողջ առ հաշիւ, որոյ վրայ յոյս ունիմ աւելցնելու և ուրիշ նուիրատու ազգայնոց գումարները:

Ընդունեցէք սրտագին յարգանքներս  
 2 Մարտ 1903 Աղօթարար  
 ԳԱՀԻՐԷ ԱԻԵՏԻՍ ՔՀՆՅ. ՇԱՂՅԵԱՆ

# Ք Ր Ո Ն Ի Կ

— Մեծ Եպարզոսը Գալիչէի ու Չինովիէֆի պաշտօնապէս հաղորդեց Սուլթանին ուրիշ մէկ իրատէն, որով կը հրամայէ աւստրո-ուսական ծրագրին գործադրութիւնը՝ եւրոպական Թուրքիոյ միւս երեք նահանգներուն մէջ ալ:

— Կ. Պոլսոյ Բերայի մէջ, անցած երկուշաբթի արիւնահեղութեան թափը եղած տան մէջ զէնքեր, ուղմամթերք ու պայթուցիկ նիւթեր գտնուած ըլլալով, ոստիկանութիւնը կը շարունակէ խուզարկութիւնները, մակեդոնական ընդարձակ դաւի մը վախէն:

— ՏանէՔ, Պուլկարիոյ նախարար պետը, մերժեց պատասխանել Սօպրանիյէի մէջ, աւստրո-ուսական բարենորոգումներուն ու ուսուցումներուն պաշտօնական զեկոյցին վերաբերեալ հարցապնդումներուն:

— Թուրքիոյ ուղմական պատրաստութեանց մասին հակասական լուրերը շատ են: Անգլիական թերթ մը կը պնդէր թէ թուրք կառավարութիւնը Սելանիկի Գ. զօրաբաժնին պահեստները զէնքի կանչելու հրամանը ետ առած էր, մինչդեռ, Պերլինըր Թակալաք կը պնդէ թէ Թուրքիան կը շարունակէ իր զօրագնդերը սփռել, և արդէն 5 միլիոն զրուշի պատերազմական տուրք մը դրած է բնակիչներուն վրայ:

— Վիեննայի Չայթ լրագիրը պոլսական մասնաւոր հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ՛ Միթրօփիճայի ուսուցիչները Պ. Չէրպինա սպաննուեցաւ Ալբանացիներէ (ականջը խօսի ժողովուրդին):

Այս հիւպատոսութիւնը, ինչպէս գիտեն Փիւնիկի ընթերցողները, անցած դարունէն ի վեր գոյութիւն ու-

նեցած է, հակառակ տեղացիներուն ընդդիմութեանը:

Սակայն ուրիշ հեռագիր մը, վերջին պահուն հասած, կը հերքէ այս վրդովեցուցիչ լուրը:

— Բրօ Արմէնիաի վերջին թիւը, Մարտ 1ին երեցած, կը պարունակէ բոլոր սղագրուած ճառերը, զորս արտասանեցին 15 Փետր. 1903 ին, Շաքո-ՏՕի թատրոնին մէջ, Պ. Պ. Տէրնուէրը սը Գօլուքան, Տրնի Գօշէն, Ֆ. Տը Բրէսանսէ, Ժան Ժօրէս, Բօլ Լըոզ և Ա. Անդոյ չը Ռուս Պօլիյէօ:

Այդ ճառերը յստակ գաղափար մը կազմել կուտան Ֆրանսայի մէջ մտքերու յուզման աստիճանին, ի նըպաստ հայաստանին:

Յուսացուածէն շատ աւելի մեծ ու արգիւնաւոր եղած է Յոյցը, որուն կազմակերպողն եղած է Տօզք. Լօրիս ՄեյիզօՔ:

Երանի՛ թէ խմբագրութեանս նիւթական միջոցները ներէին անմիջապէս հրատարակել բացառիկ մեծածաւալ թիւ մը, Բրօ Արմէնիաի Մարտ 1ի թիւին ամբողջութեանը թարգմանութիւնը պարունակող: Այն ատեն, մեր պատ. ընթերցողներէն անոնք որ Ֆրանսերէնի հմտութիւն չունին, պիտի տեղեկանային թէ որքա՞ն ազնիւ ջանքերով առաջ կը տարուին Հայկական Հարցը Մակեդոնականին հետ մեկտեղ լուծել տալու գաղափարն ու եռանդը: Իրօք, Փետր. 15ի Հաւաքոյթի մեծանուն բանախօսներուն արտասանած ճառերը, մէկ մէկ գլուխ գործոցներ են, Արևելեան Հարցին, Հայ Չարչարանքին ու Եւրոպական դիւանագիտութեան վերաբերմամբ:

— Բարիզի Մեծ Յոյցը, բարեբազդ ենք յայտնելու, հզօր արձագանգ գտած է շուտով ի Պելճիքա, ուր, Անվէրսի մէջ, Փետր. 25ին տեղի ունեցած է Հաւաքոյթ մը, Շաքո-ՏՕ-

ինէ ո՛չ նուազ հոյակապ, Հայաստանի  
շարժերուն վրայ:

— ԺԸՆԷՎ., Վիգորիա Հօշի մէջ,  
Մարտ 5ին, հինգշաբթի օրը, Եւրո-  
պական Հայ Ռասանոցաց Միութեան  
նախաձեռնութեամբը տեղի ունեցած  
պիտի ըլլայ բանախօսութիւն մը, Հա-  
յաստանի ու Մակեդոնիոյ խժգժու-  
թեանց վրայ, Կ. Պոլսոյ ֆրանսական  
հիւանդանոցին նախկին վերաբուժա-  
պետ Տօգթ. Է. Լատսիէ ու Բրօ Ար-  
մենիաի խմբագրապետ Պ. Բիէռ Քիշ-  
եարէ:

— Ժօրժ Պրանսէս, Իանիացի մե-  
ծանուն գրագէտը, Փետր. 2ին, Եւ-  
րոպ. Ռասան. Միութեան կողմէն կան-  
չուած Պերլինի մէջ, իր սարսափած ուն-  
կընդիրներուն կը գծէր ահռելի ճրշ-  
մարտութեամբ մը, 1895-1896ի ջար-  
գերուն տեսարանները. յուզումն ա՛յն  
աստիճան մեծ եղաւ որ տիկիները  
սրահը թողին ելան ու կճող բանախօսը  
պոռաց. «Ինչ որ Պերլինի կիները չ'են  
կրնար շտեղ, թո՛ւ իրարու քսեն թէ ա-  
սիկայ հարիւր ու հազար անգամներով  
կը պատահի հայ կիներուն»: Յետոյ  
աւելցուց. «Յանախ թորք կառավա-  
րութիւնը կը ծաղրէր եւրոպական  
սպառնաշիջները, որովհետեւ գիտէր  
թէ ինք՝ ճնշողական միջամտութեան մը  
դէմ ունէր հզօր պաշտպանութիւն մը,  
այն է գերման կառավարութեան քա-  
րեկամութիւնը:»

Եւ գերման ունկնդիրները խելա-  
յեղօրէն կը ծափահարէին մարդը, որ  
այսքան անողոք ճշմարտութիւններ  
կ'ըսէր:

— Սերանիկի, Մանասրրի եւ  
Իսխայի վալիները հրաման ստացած  
են եղեր կէտ առ կէտ հետեւիլ ընդհ-  
քննիչ Հիլմի Բաշայի հրահանգներուն,  
առանց ահանջ կախելու Երլտըզի ներ-  
չընչումներուն: Ըսել է թէ Մակեդո-  
նական բարենորոգումները գործադ-  
րուելու վրայ են...

— Ն. Բ. Խսիվը մտադիր է այս  
ամառ ալ Կ. Պոլիս երթալ:

— Գեր. Տ. Յովսէփ Եպիսկոպոս  
Գահիրէէն քաղաքս իջած է: Այցելու-  
թեան նպատակը յայտնի չէ:

— Միւրան Խան Գալիական հը-  
րաժարած է եղեր Խնամակալութե-  
նէն:

— Ձերունի մէջ աղքատութիւնն  
ու թշուառութիւնը ա՛յն աստիճանի  
հասած են որ Առաջն. փոխանորդ Տէր  
Կարապետ քհնյ. Երկայնեան, հեռա-  
գրով մը խնդրած է Վալիսէ Սուրբա-  
նին մայրենի գթութիւնը, տուրքերու  
հաւաքումը դադարեցնելու համար:

Հեռագրին վրայ, Կայս. իրասեով  
հրամայուած է կարող Ձեթունցիներէն  
անձ գլուխ ամսական 4 կամ 8 մէքա-  
շիք, այսինքն 1 կամ 2 զրուշ միայն  
տուրք հաւաքել. իսկ անկարողները  
զերծ թողուլ տուրքէ:

— Այրի Տիկիմ Մառի Պենչեանի  
ընդ. Տիար Պաղտիկ Առաքելեանի ա-  
մուսնութեան պսակը տեղի ունեցաւ  
Փետր. 27ին ուրբաթ իրիկունը, կըն-  
քահայրութեամբ Տիար Լ. Նիզամեանի:  
Մեր անկեղծ խնդակցութիւնները:

## ՄԱՅԱԳՈՅԺՔ

ՏԻԱՐ Ս. ՊԵՆՉԵԱՆ

Վաղեմի դերասանապետը, Փետր.  
28ին շաբաթ օրը մեռաւ երկարատեւ  
հիւանդութենէ ետքը: Յուզարկաւու-  
րութիւնը տեղի ունեցաւ յաջորդ օրը,  
կիրակի:

Թրքահայ բեմը այսպէս տակաւ  
կ'ամայանայ:

ՏԻԿԻՆ ՍԱԹԵՆԻԿ Մ. ՄԸՍՐԵԱՆ

Իուստր Տօգթ. Փ. Մալէզեանի,  
երկարատեւ հիւանդութենէ մ'ետք,

ամոյս Երն մեռաւ Գահիրէի Հելուանի մէջ:

Յուզարկաւորութեան հանդէսը տեղի ուննցաւ մեծ շքեղութեամբ:

Վաղամեռիկ Տիկնոյ այս կորուստը խորին միտ կ'առթէ ո՛ր մասնէն անմխիթար Հօր մեծայարգ Տօգթ. Յ. Մալէզեանի և եղբօրը Տիար Վահանի, ո՛չ միայն իր ազգականներուն, պարագաներուն ու բարեկամներուն, այլ և ամեն անոնց որոնք կը ճանչէին զՏիկին Սաթենիկ, իբրև զարգացած, ազնիւ ու յարգուած տիպար Հայուհի մը:

Մեր անկեղծ ու խորին վշտակցութիւնները:

### ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐԿԵՐ

Հարց Պատասխաններ. Բ. Հրատարակութիւն Գահիրէի Լսարան-Ընթերցատան Ընկերութեան Գրական Մասնաճիւղին, կամ աւելի ճիշդը, Տիար Սեդրակ Ստեփան Օսպալեանի, նոյն ընկերութեան աննկուն ու անխոնջ անդամ մեր յարգելի բարեկամին:

Այս գրքոյկը կը բաղկանայ 96 էջերէ. գինն է 10 զրուշ ողջ:

«LES LUSIGNANS», Ֆրանսերէն գեղեցկատիպ գրքոյկիս երկասիրողն է Տիար Արմենակ Հ. Աղատեան, ապագայ խոստացող երիտասարդը: Թերթիս ծաւալը չը ներեր երկայնօրէն զբաղիլ այս գրքոյկին հրատարակութեան շարժառիթովը, գրական արժէքին, ոճին, ևն, ի մանրամասնութիւններովը: Լաւ է որ ամեն ֆրանսագէտ Հայ ունենայ անկէ:

ՊԱՏՐԱՍ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

## ԼԵՒՈՆ ՎԵՐՁԻՆ

ԼՈՒՍԻՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

Ընդարձակ եւ պատկերազարդ երկասիրութիւնը Կ. Յ. Բասմալեանի:

Բովանդակութիւնն է. — Լեւոնին ծնողքը, ծնունդը, թագաւորութիւնը, գերութիւնը, ազատութիւնը, Սպանիայի մէջ թագաւորելը, Պարիս հաստատուելը, Լոնդոն երթալը, կրկին Պարիս դառնալը, մահը, թաղումը, կտակը, չեղիմը, գերեզմանին աւրուելը, ոսկորներուն փոխադրութիւնը, նոր գերեզմանը, ևն. ևն.

Այս բոլորը մանրամասն կերպով նկարագրուած պիտի տեսնէ ընթերցողը՝ Լեւոնին իսկական ստորագրութիւնն ու կնիքը կրող վաւերագրերու ընկերակցութեամբ եւ լատին, սպանիացի, ֆրանսացի, անգլիացի եւ հայ պատմիչներու վկայութիւններով:

Գինը կորոշուի տպագրութիւնէն յետոյ միայն:

Տպագրութեան ծախքերը հոգացող բարերար մը կը խնդրուի:

### « ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը Թէ՛ Հայերէն, Թէ՛ գաղղիերէն և Թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ:

ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ,

### Ա. Չ Գ Ե Ր

Անգլիերէնի մասնաւոր դասեր աւանդողը— որուն ծանուցումը ժամանակէ մ'ի վեր կը հրատարակուի Փիւնիկի մէջ — կը շարունակէ իր դասախօսութիւնները Պէռլիճի մէջ թոտով. հիմայ ունի բաւական թիւով աշակերտներ. կը խոստանայ շաբաթը միայն 4 անգամ դաս առնողին սովորեցընել 5-6 ամսուան մէջ գրել, կորգալ ու խօսիլ:

Մանրամասնութեանց ու պայմաններուն համար գիմել Փիւնիկի խմբագրութեան:

### ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մէնչիյէյի հրատարակը, Բասաժ Բրէնո Սէյֆէտտին պէյ, թիւ 50 խօսութիւն:

Սմեն տեսակ արեւելեան կերակուրներ, և անուշեղէններ, մասնաւորաբար Տէօնէր եւ Շիշֆեպպալի:

Այս ճաշարանի վարիչներն են Տեարք Կարապետ Տիրհէմէեան և Սարգիս Հիւսէյինճեան

Բաժանորդագրութիւն կ'ընդունուի գիւրամառչելի պայմաններով, կանխիկ վճարումով: Գիներուն չափաւորութեամբը կրնայ մրցիլ օտարներու նման հաստատութեանց հետ:

Մինչև ցարդ հոն յաճախող պատազդաւորներուն հետզհետէ աճող թիւը պերճախօս վկայութիւն մ'է արդէն սոյն ճաշարանին մէկէ աւելի առաւելութեանցը:

Յաճախեցէ՛ք Արեւելեան ճաշարանը:

### ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՁԻ

Անգլիերէն հոյակապ երկին կարեւոր մասերուն ամփոփումը, հայերէնի թարգմանուած, գեղեցիկ հատոր մը, 157 էջերով, հեղինակին պատկերով

Տօնապէստան: Գիւն է 3 ֆրանգ.

Գիմել.

Mr. Donabedian  
177 Godolphin Road  
Shepherd's Bush London.W.

### ՏՐ. ՍՍ.ՐԳԻՍ Բ. ԺԱՍԿՈՉԵԱՆ

Աւերիկեան վկայեաց բժիշկ Սեօսրիս փողոց թիւ 1 «Ճար ս'Աշէֆասնէրի» ի սպարանիս վրայ ի Ա. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան պատիւ ունի ծանուցանել Տեղիս արդոյ հաստրակութեան թէ՛ ինք հաստատուած է վերջնապէս քաղաքիս մէջ ու պատրաստ է դարմանելու ընդհանուր հիւանդութիւններ: Մասնագիտօրէն ու Ամերիկայի կատարելագործուած ու նորագոյն բժշկական փորձերով ու սխաղիմով կը բուժէ մանաւանդ արեան վերարբերեալ զանազան ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ամեն օր կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ Չորեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ իրեն գիմով ազքատ հիւանդները: